

Մարդ-ձի (Centaurus=ցենտավրոս, կենտավրոս) առասպելական Էակի մարմնավորումը հին Հայաստանում

Միննյան Հակոբ Ե.

արվեստագիտության դոկտոր, պ.գ.թ.,

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի պրոֆեսոր,

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Պատմամշակութային

Ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտության բաժնի վարիչ,

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (Երևան, ՀՀ)

haksimon@gmail.com

ՀՏԳ՝902/904(479.25); EDN: ZPTHRJ

Հանգուցաբառեր՝ Հայաստան, ուշ բրոնզի դար, դամբարան, կենտավրոս, դիցաբանություն

Олицотворение Кентавра (Centaurus=Центавр) – мифического персонажа человека-лошади в древней Армении

Симонян Акоп Е.

доктор искусствоведения, к.и.н.

профессор Государственной Академии художеств Армении,

заведующий отделом археологии Научно-исследовательского Центра историко-культурного

наследия при Министерстве Образования, науки, культуры и спорта РА,

заслуженный деятель культуры РА (Ереван, РА)

haksimon@gmail.com

Аннотация. Одним из широко распространенных и своеобразных персонажей древнегреческой мифологии является загадочное существо, гибрид человека и коня – центавр (кентавр). Это сказочное создание с головой и протомой человека и телом лошади принято считать как явления характерное сугубо для древнегреческого мышления и мифических представлений.

В 2013 г. при раскопках II царского кургана в могильнике Верин Навер было сделано удивительное открытие. У входа в обширную гробницу, датируемую XVI-XIV вв. до Р.Х., построенную из больших туфовых плит, лежала четко сформированная комбинация костей – задняя голень лошади (Metapodia) и правая плечевая кость человека (Humerus), т.е. отрубленные рука человека и нога лошади, которые затем сартикулировали (соединили суставы) и положили у входа. Здесь четко прослеживается стремление создания мифического существа, полу-человека-полуконя, которое соединяло бы их силу. Это мифическое создание «охраняло» вход в гробницу.

Эта комбинация костей в гробнице свидетельствует, что в древней Армении было распространено представление о мифическом получеловеке-полулошади – центавре. О теснейших взаимосвязях между древней Арменией и Грецией свидетельствует не только мифологическая общность, но и своеобразное оружие – рапиры и наконечники стрел с раздвоенным основанием черенка, которые идентичны и встречаются только в Армении, на острове Крит и материковой Греции Микенской эпохи.

Ключевые слова: Древняя Армения, поздний бронзовый век, гробница, кентавр, мифология.

The Embodiment of Fabulous Creature Man-Horse (Centaurus) in Ancient Armenia

Simonyan Hakob E.

Doctor of Science (Art), PhD of History, Professor of Art State Academy Fine Art of Yerevan

Head of the Department of Archeology of Scientific Research Center of Historical & Cultural Heritage

of Ministry of Education, Science, Culture and Sport of RA,

Honored Worker of Culture of RA (Yerevan, RA)

haksimon@gmail.com

Abstract. One of the most common and peculiar characters of Greek mythology is a mysterious creature, a hybrid with a human head and a horse body, called Centaur (the Centaurus). It is widely accepted that the Centaur is a characteristic phenomenon of Greek thought and mythical imagination.


The excavations of enormous Grave II of Verin Naver Necropolis in 2013 resulted in a surprising discovery. At the spacious entrance built with large tufa slabs a seeming organic union of two pipy bones were unearthed on the tufa floor. The osteological study conducted *in situ* revealed those bones being an interesting combination of human right arm bone (Humerus) and the horse back leg tibia (Metapodia). That is, they had cut a human arm and a horse leg and laid on the grave's floor. Here, we can clearly see the idea of creating a powerful fabulous creature which should secure the tomb entrance.

The documentation of the intentional combination of human and horse bones in this mound dated by the XVI-XIV cc. BC testifies that the image of fabulous Man-Horse used to be widespread in ancient Armenia. The close relationship between ancient Armenia and Greece are attested not only by mythological generalities, but also the weapon types (rapier and bifurcated base bronze arrowheads) documented only in these two regions: in Armenia, the island of Crete and the Greek mainland of Mycenaean era.

Key words: Armenia, Late Bronze Age, tomb, centaur, mythology


Աշտարակ քաղաքից 3,5 կմ արևմուտք, մարզկենտրոնին պատկանող հողատարածքում, Վերին Նավեր դամբարանադաշտի հարավ արևելյան մասում (նկ. 1), Արարատյան դաշտի հին բնակիչների ընկալմամբ սրբազան տարածքում վառ նարնջագույն տուֆե ելքերի վրա կառուցված են քարաշար դամբանաարահներով քարահողային հինգ դամբանաբլուր (նկ. 2, 3):

ամերիկացի գիտնականների կողմից, համակողմանի լաբորատոր հետազոտությունները՝ հողերի պալինոլոգիական հետազոտությունները Երևանի, Թբիլիսիի և Մոսկվայի, մետաղե իրերի՝ սպեկտրալ, քիմիական և տեխնոլոգիական տարրալուծումները ԱՄՆ-ի և Եվրոպայի լաբորատորիաներում, հանրավորություն ընձեռեցին մասնակիորեն վերականգնել հինարևելյան արքայական ծեսի բազմաթիվ հետքեր:




նկ. 1

Սրանցից երեքը հսկա կառույցներ են (դամբանաթմբերի առավելագույն բարձրությունը՝ 1,5 մ է, տրամագիծը՝ 50 մ): Բոլոր դամբարաններն էլ մի քանի անգամ թալանվել էին նախքան պեղումները, սակայն ժամանակակից մեթոդներով և բացառիկ խնամքով կատարված հետազոտությունները, գտածոների վերականգնումը, հնամարդաբանական և հնակենդանաբանական բնորոշումները հայ, եվրոպացի և



նկ. 2



նկ. 3

Բոլոր դամբարաններում էլ վկայվել են.
ա/ մոնումենտալ ճարտարապետություն;
բ/ ձևավորված ծիսական բարդ համակարգ՝ «տիրոջ» մարմնի դիակիզում, մարդկանց և կենդանիների, այդ թվում ձիերի գոհաբերություններ;

գ/ բազմաֆունկցիոնալ թաղման գույք՝ զենքեր, մարտակառքեր, իշխանության խորհրդանշաններ, աշխատանքային գործիքներ, ծխական արարողությունների համար նախատեսված անոթներ, թանկարժեք մետաղներից, բազմագույն սպալուց և ոսկերչական քարերից պատրաստված պերճանքի առարկաներ;

դ/ տարբեր երկրներից ներմուծված իրեր:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Հ. Միմոնյան) 2012-2013 թթ. պեղել է II արքայական դամբանաբլուրը, որը թվագրվում է Զ.ա. II հազարամյակի կեսով¹: Նախքան պեղումները հսկա դամբանաթումբն անբողջությամբ ծածկված էր շինաղբով, մացառներով և խոտածածկույթով, որի հետևանքով գրեթե չէր ընկալվում: Թույլ ուրվագծվում էր միայն դամբանաթումբն օղակող, միմյանց հավաքված, մեծ զետաքարերից կառուցված կրոմլեխը (նկ. 4): Դամբարանի հյուսիսային մասով է անցնում ժամանակակից հիմնահողային ճանապարհը, որի կառուցման ժամանակ տեխնիկայի օգնությամբ զգալիորեն ավերել էին դամբանաթումբը, մասամբ՝ դամբանասրահը: Սրա հարավ-արևելյան քարը տեղահանել էին էքսկավատորով և գցել դամբանաթմբի վրա (նկ. 5): Այս քարի վրա առկա է փոսիկաձև խորացում (նկ. 6):

ղեյի հարավ փոքր թեքությամբ իջնող հատակ: Ի տարբերություն Արքաների հովտի մյուս դամանասրահների, որոնք կողմնորոշված են հյուսիս-հարավ, այս դամբանասրահը ձգվում է արևելք-արևմուտք ուղղությամբ: Կառուցված է կողքի վրա ուղղահայց դրված տուֆի հսկա սալաքարերով, որոնք սեղմ հավաքված են իրար: Քարերի ուղղահայացությունն ու կանոնավոր շարքը ապահովելու նպատակով դրանց տակ և սալերի հպման մասերում հարմարեցրել են մանր քարեր: Կառույցի արևմտյան կեսը կազմում է դամբանամուտքը (դրոմոս), որը լցված էր տուֆե մեծ սալաքարերով, իսկ արևելյանը՝ թաղման սրահը (նկ. 5, 11):



նկ. 4



նկ. 5



նկ. 6

Դամբանասրահի չափերը՝ երկարությունը = 5 մ, լայնքը = 3 մ, մակերեսը՝ 15 քմ, խորությունը՝ 145-150 սմ: Դամբանասրահն ունի գրեթե հարթ,

¹ Թաղման գույքով, մասնավորապես մարտակառքի փայտե թավիքը զարդարող բրոնզե կիսագնդաձև ներդիրներով և բիտումից պատրաստված մեղալիոնի դրվագով այս դամբարանը նման է մոտ 10 մ դեպի արևմուտք ընկած IB դամբարանի գտածոներին, որոնք, ըստ ռադիոածխածնային տարալուծման տվյալների, թվագրվում են Զ.Ա. XVI-XV դդ.:

Դամբանասրահի հյուսիսային պատը, մինչև դրոմոսը, կառուցված է 4 հսկա սալով: Արևելյան պատը կազմված է երկու մեծ սալերից, որոնցից հարավայինը դամբանասրահի կառուցման ժամանակ օգտագործված ամենամեծ սալաքարն է: Հարավային պատը դարձյալ շարված է մեծ սալերից, որոնցից արևելքից հաշված երրորդի եզրից դեպի արևմուտք երկարում է հատակի ժայռին երկու շարք, տափակ դրված բազալտ քարերով ձևավորված միջնապատը: Սրա հյուսիսային

եզրը՝ երկայնական պատին չհասած ընդհատվում է, զուրկ է քարերից՝ այստեղ կարծես ձևավորել են մուտք է (նկ. 5, 8, 11):



նկ. 7




նկ. 8



նկ. 9



նկ. 10




նկ. 11

Ծածկը չէր պահպանվել: Դատելով լայնական թռիչքի մեծ չափերից, ինչպես նաև մեծ սալարեկորների բացակայությունից, որոնք կարող էին վկայել դամբանասրահի սալածածկ լինելը, կարելի է եզրակացնել, որը դամբարանն ունեցել է գերանակապ տանիք:



նկ. 12, 13

Դամբանասարահի հատակը գրեթե հարթ կտրած-հարթեցված տուֆե ժայռի մակերեսն է, որն արևմուտքից դեպի արևելք խորանում է փոքր թեքությամբ: Այն ծածկված պատինայով: Հարավ-արևելյան մասում տուֆե հատակն ավելի խորն է, իսկ ժայռը՝ փխրուն, քանգի պատինան ալտեղ բացակայում է: Պատի սալաքարերի վերին եզրից մինչև 100-120 սմ խորությամբ դամբանասարահը լցված էր մանր և միջին չափի բազալտ և տուֆ քարերով (նկ. 12): Սրանց մեջ ափռված էին փշրված անոթների և ոսկորների բեկորներ: Հատակն ամբողջությամբ ծածկված էր սև փայլեցված խեցեղենի բեկորներով, մարդու և կենդանիների ոսկորներով (նկ. 13): Գտածոների տեղը և դիրքը հստակ հաստատագրելու նպատակով դամբանասարահի ողջ մակերեսը բաժանեցինք 1x1 մ չափի քառակուսիների: Դամբանասարահի հյուսիս-արևելյան անկյունում, H:7/d քառակուսում, մոխրաշերտ էր (նկ. 14): Շրջակայքի խեցատները կրում էին կրակի ազդեցության հետքեր: Սրանք թերևս հետքերն են դիակիզման խարույկի: Դամբանասարահի հվ-ամ եզրում, տուֆե հատակից 5-7 սմ բարձրությամբ, F:8a քառակուսում՝ 2010 միավոր, հայտնաբերվեց բրոնզե 3 իր՝ երկնյուղ հիմքով երկու նետասլաք և մեկ անիվ (նկ. 15):



նկ. 14, 15



նկ. 16, 17

Սրանց մոտ էր միակ ամբողջական, բերանքսիվայր դրված հիանալի սև փայլեցված սավորը (նկ. 16, 17): Այստեղ դամբարանն անադարտ էր մնացել: Անադարտ էր նաև դամբանամուտքը դամբանասարահից գատող միջնապատի կենտրոնական հատվածը, որտեղ բացվեց մի խիստ ինքնատիպ ոսկրաբանական իրավիճակ՝ ձիու ստորին վերջույթի (սրունքոսկրի) և սրան հյուսիսից, նույն գծով կցված տղամարդու աջ բազկոսկրի համադրություն: Այստեղ հստակ դիտվում էր, որ ձիու ստորին վերջույթն արտիկուլացված է մարդու բազկոսկրի հետ: Սրանցից դեպի արևելք, ուղիղ անկյան տակ դրված էր մեկ այլ ԽԵԱ ստորին վերջույթ՝ արտիկուլատված իր ոտքի խաղերի հետ: Ստորին խողովակաձև

վերջույթը խաղի մոտ ծավալած էր: Կենդանու II սրունքներից դեպի հյուսիս-արևելք մարդու գանգի՝ գագաթի վրա ընկած դիրքով, ծոծրակոսկրի և գանգատուփի՝ էնդոկրանային հատված էր: Այն շրջափակված էր մեծ քարերով, որը վկայում է գանգի դամբարանում Insitu դիրքով պահպանված լինելը (նկ. 19): Դատելով գանգատուփի հաստությունից, ծոծրակոսկրի ռելիեֆայնությունից, անհատը տղամարդ է եղել: Չույգ գագաթոսկրերի միացման կարը սայիացած է, իսկ ծոծրակոսկրը գագաթոսկրին միացման կարը՝ ոչ: Սա տարիքը որոշելու կարևոր կռվան է, որը փաստում է գանգի տիրոջ 35-55 տարեկան լինելը, որը տղամարդու հզորության գագաթնակետին հասած լինելու վկայություն է: Ձիու սրունքոսկրների և մարդու բազկոսկրի միացման մասում քայքայված ձիու թիակոսկր կամ կոնքոսկր էր՝ տուփ N 2037: In situ պահպանված ոսկորները, որոնք կարծես միմյանց օրգանական շարունակություն էին կազմում, մարդու և ձիու ոսկորներ էին (նկ. 18):



նկ. 18, 19

Դրանք տեղում, միաջգային դիտորդների ներկայությամբ (հուշարձան այցելած Բրիտանական թանգարանի աշխատակիցների խմբի, Միտչել Ռոթմանի [Վայդների համալսարան, ԱՄՆ] և Դան Ռահիմիի [Տորոնտոյի համալսարան, Կանադա] ներկայությամբ ուսումնասիրող խումբը (մարդարան՝ Ռուզան Մկրտչյան, հնակենդանաբաններ՝ Նինա Մանասարյան և Մրիամ Բելկմայեր (ԱՄՆ), եզրակացրեց, որ այստեղ փաստվել է մի իրավիճակ, երբ կտրել էին մարդու ձեռքը և ձիու ոտքը, իրար միացրել և այս դիրքով դրել դամբարանի հատակի վրա: Մեր կարծիքով դրանով իսկ միավորել էին մարդու հարվածային ուժը և ձիու արագավազ լինելու հատկությունները՝ ստեղծելով մարդու բազկի և ձիու ոտքի համադրությամբ մի առասպելական էակի՝ մարդ-ձիու կերպար, որը հսկելու էր արքայական դամբարանի մուտքը: Թերևս սա հունական առասպելաբանությունում լայնորեն տարածված կենտավրոսի՝ մարդու առաջամասով և գլխով ու ձիու իրանով առասպելական էակի հնագույն վերարտադրություններից է: Այստեղ հստակ կատարվել է դեկամնացիայի ծես, երբ կենդանու և մարդու ոսկորները, առանց դրանց ամբողջականությունը վնասելու², կտրտել են և շարել ուղիղ գծով, ստեղծելով դիցաբանական կենդանու՝ կենտավրոսի (ձիամարդու) իմիտացիա: Սա հին Հայաստանի թաղման ծեսում կարևոր և բացառիկ վկայություն է:

Նինա Մանասարյանի բնորոշմամբ առաջին և երրորդ, միմյանց շարունակություն կազմող և անատմիական ճիշտ դիրքով, ամբողջական վիճակում դամբարան դրված ոտքը ձիու հետևի սրունքակրն է (metapodia)՝ խաղերի (putovaya) հետ միասին: Մարդու բազկոսկրի շարունակությունը ըստ Նինա Մանասարյանի դարձյալ ձիու է՝ առջևի սրունքակրն է: Քանի որ հետևի սրունքակրնը կարճ է, քան առաջինը, ապա որոշակի է, որ այստեղ դրել են երկու առջևի ոտքերը՝ ամբողջական վիճակում:

N 7/d քառակուսում, մեծ քարերի տակ, հատակի վրայի հողաշերտում կուտակված էին արծաթե և բրոնզե, տարբեր չափերի կիսագնդաձև տասնյակ գլխիկներ, որոնք հավանաբար մարտակառքի թափքը զարդարող մանրամասներ են: Հայտնաբերվեց նաև հիանալի պահպանված, հատիկազարդ ոսկյա մեկ ուլունք: Դամբարանում հայտնաբերվել են նաև ցլերի, ձիերի, վարագի, այծյամի, ոչխարի, այծի, շան ոսկորներ, ինչպես նաև տղամարդկանց և կնոջ կմախքի ոսկրեր: Ուշագրավ է «թզուկի» մարդու վերին աջ ծնոտի (ատամներով հանդերձ) և

ակնախոռոչի բեկորը, որը տհասի կամ միտումնավոր խեղված ծաղրածուի գանգի մաս է՝ մաշված կաթնատամներով: Մրանք, ամենայն հավանականությամբ, դիակիզման ծեսով թաղված դամբարանի տիրոջ համար կատարված զոհաբերություններ են, ինչը վկայված է նաև Վերին Նավերի և Ներքին Նավերի վերնախավի այլ դամբարաններում: Ակնհայտ է, որ այստեղ կատարվել է սոցիալական ամենաբարձր աստիճանին կանգնած անահատի թաղում: Դամբարանը հետագայում թալանել և թանկարժեք իրերը հափշտակել էին: Սակայն հսկա դամբարանաբախի առանձին հատվածներում իրենց նախնական դիրքով պահպանվել էին որոշ թաղման ընծաներ և ոսկորներ:

«Կենտավրոսի» ոսկորների տակից՝ F:7/a քառակուսի, հայտնաբերվեց մուգ կարմիր սարդիոնե ուլունք: G:7/g քառակուսում, խեցու բեկորների միջակայքում հայտնաբերվեց մեկ այլ մանր, կարմիր սարդիոնե ուլունք՝ Loc. 2045, տուփ՝ N 2096: F:7/d քառակուսում, անմիջապես գետնի վրա ընկած էր բրոնզե սկավառակաձև «կոճակ»՝ Loc. 2046, տուփ՝ N 2097: Համանման մեկ այլ կոճակ կար F:7/b քառակուսում, Loc. 2030, տուփ՝ N 2098:

Հյուսիսային պատի III սալի տակ, կենտրոնական մասում, կենդանու լեզվի տակի ոսկր էր, պատին հաված՝ ֆալանգ և բրոնզե բազպան, իսկ սրա տակ բրոնզե օղակ էր՝ F:6/d քառակուսի, Loc.- 2013, տուփ՝ N 2073: Այստեղ գտնվեց նաև ձիու կամ կովի կտրիչ ատամ: «Մրունքոսկրից» արևմուտք, N 3՝ տեղում ճզմված անոթի բեկորների միջակայքում հայտնաբերվեցին՝ սարդիոնե երկու խողովակաձև ուլունք և կաշվե զրահաբանկոնի մեկ կոճակ՝ երկու, դեպի ներս ծաված ոտքով (2013 միավոր, 2013 տուփ, F:7/a քառակուսի): Ընդհանուր առմամբ դամբարանաբախի տարբեր հատվածներից հայտնաբերվեցին հիանալի հղկած սարդիոնե տասնյակ ուլունքներ:

Շուրջ երկու տարի տևած վերականգնումից հետո խեցեղենի կույտից՝ հազարավոր բեկորներից հնարավոր եղավ վերկանգնել երկու տասնյակից ավելի կավանոթ, որոնք բոլորն էլ բնորոշ են ուշ բրոնզի դարի վաղ փուլին՝ Ք.ա. XVI-XIV դդ.: Դրանցից մեկը հսկայական կարաս է (նկ. 20): Դա կարող էր պարունակել շուրջ 100 լ հեղուկ, և ամենայն հավանականությամբ լցված է եղել գինով³: Ուշ բրոնզի



նկ. 20

² Չոհաբերված սրբազան կենդանիների մարմնամասերի գատումը՝ առանց ոսկորները վնասելու հնդեվրոպական ծես էր, որը վկայված է Վեդաներում, տես՝ [1, 1, 162, “Восхваление коня”, с. 198].

³ Վերին Նավերի IA դամբարանի հողերի պալիտոլոգիական տարրալուծումը, որը կատարել է Էլիսա Կվավաձեն, վկայում է որ Նավեր հնավայրը բրոնզի դարում շրջապատված է եղել մշակովի խաղողի այգիներով:

դամբարաններում մեծ կարասներ չեն հայտնաբերվել և այս անոթի ներկայությունը նույնպես վկայում է դամբարանում թաղվածի սոցիալական բարձր աստիճանի մասին:

ԿԵՆՏԱՎՐՈՍ: Կարծիք կա, որ կասիտներն են եղել առաջին հեծյալները, որոնց հետ շփվելով դեռևս ընտելացված ձի չտեսած հին հույները, ինչպես հազարամյակներ անց Կենտրոնական Ամերիկայի հնդիկները, հեծյալներին ընկալել են որպես մեկ միասնական կենդանի էակ՝ ձիու մարմնով, մարդու գլխով և կրծքամասով: Քանի որ կասիտները Առաջավոր Ասիայում հայտնի են եղել Ք.ա. 1750-1250 թվականներին, ապա ենթադրում են, որ այդ ժամանակ է ձևավորվել կենտավրոսի՝ նետ ու աղեղով զինված հերոսի կերպարը: Ուշագրավ է, որ ընդունված տեսակետի համաձայն կենտավրոսի կերպարը հին Հունաստան է թափանցել Կրետե կղզուց, որտեղ հայտնվել են առաջին հեծյալները: Հունական դիցարանում կենտավրոսի հիմնական հատկանիշներն էին գինու նկատմամբ սերը, վավաշտությունը և կնոջը բռնի տիրելու հակումը [2; 3]: Վերին Նավերի և ընդհանրապես Հայաստանի դամբարաններից հայտնաբերված գեների մեջ խիստ կարևոր տեղ են բրոնզից վանակատից, կայծքարից և հասպիսից պատրաստված նետապարքները: Վերին Նավերում այնքան է կարևորվել նետը, որ դրա պատկերներով զարդարել են գինի ըմպելու գավաթներից մեկը [4, էջեր 222-226]: Առկա են նաև Հին Հայաստանում գինու լայնորեն օգտագործման բազմաթիվ վկայություններ: Մարդ-ձիու կերպավորման բացահայտումը հնդեվրոպական ծիսակարգով կատարված դամբարանի ծիսակարգում հիմք է եզրակացնելու, որ կենտավրոսի գաղափարը հին կարող էին փոխառել Հայաստանից և ոչ թե Հունաստանից բավականին հեռու գտնվող Իրանական լեռներից: Այս եզրահանգման համար կարևոր է նաև այն փաստը, որ հենց Նավերում են փաստվել ընտելացված ձիերի զոհաբերությունների հնագույն վկայությունները [5, էջեր 173-209]:

Բրոնզի դարում հայ-հունական փոխառնչությունները հիմնավորվում են նաև հնագիտական արտեֆակտների և ճարտարապետական կառույցների ընդհանրությամբ: Եվ Հայաստանում, և Հունաստանում, այդ թվում նաև Կրետե կղզում առկան են միայն այս տարածաշրջաններում փաստված հետևյալ ինքնատիպ գեները՝ ա/ սուսեր կոչվող երկար սրերը, բ/ կոթառի հիմքում երկնյուղ, գնդաձև գլխիկներով ավարտվող բրոնզե նետապարքները (նկ. 21, 22), ճարտարապետական կառույցները՝ այսպես կոչված կիկլոպյան ամրոցները, դիցաբանությունը, մասնավորապես առասպելական մարդ-ձիու, կենտավրոսի մասին պատկերացումները:



նկ. 21, 22
բրոնզից նետապարքներ. Կրետե կղզուց և Վերին Նավերից

Եթե մայրցամաքային Հունաստան գեների նշված տիպերը, ճարտարապետական և դիցաբանական ընկալումները կարող էին փոխանցվել ցամաքային ճանապարհով, ապա Կրետե կղզի դրանք հասել են ծովով: Կենտավրոսի, առավել ճիշտ Ցենտավրոսի (κένταυρος, centauros) անվան իմաստաբանական վերածության վերաբերյալ շրջանառվում են տարբեր տեսակետներ: Դրանցից է նաև Ա. Արծրունու տեսակետը, ըստ որի Ց(Ձ)ենտավր բառն ունի հայերեն ծագում և նշանակում է Ձի տա- վրա = ձիու վրա, ձի քշող, հեծյալ [6, էջ 12]:

Ամփոփելով կարող ենք ընդհանրացնել, որ Վերին Նավերի պեղումների շնորհիվ բացահայտվում են հին Հայաստանի պատմության, մշակույթի և դիցաբանության մոռացված էջերը, վեր են հանվում Հայաստանի և Հունաստանի հնագույն փոխառնչությունները:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճարտարապետ՝ Կորյուն Ղաֆադարյանին, հնագետ՝ Հարություն Բադալյանին, հողերի պալինոլոգիական հետազոտման համար՝ Էլիստ Կվավաձեին (Վրաստան), Այոնա Ալեշինսկայային (Ռուսաստան), Անահիտ Աթյանցին (Հայաստան), կենդանիների ոսկորների բնորոշման համար՝ Նինա Մանասարյանին (Հայաստան), Պամ Կրաբթրին (ԱՄՆ), Մրիամ Բելկմայերին (ԱՄՆ), մարդաբանական բնորոշումների հա-

մար՝ Ռուզան Մկրտչյանին, երկրաբանական դիտարկումների համար՝ Արկադի Կարախանյանին, Խաչիկ Մելիքսեթյանին (Հայաստան), սպեկտրալ տարալուծումների համար՝ Էրնեստ Պերնիցկային (Գերմանիա), գտածոների վերականգնման համար՝ Ելենա Աթոյանցին, Լիանա Ժամագործյանին, Արինա Գրիգորյանին, Լուսինե Բաղդասարյանին, գրչանկարների համար՝ Թագուհի Հմայակյանին և Նանար Քալանթարյանին (Հայաստան):

Օգտագործված գրականության ցանկ

1. Ригведа, Мандалы I-IV, Издание подготовила Т.Я. Елизаренкова. – Москва, “Наука”, 1989.
2. <http://www.bestiary.us/centaur.php#>;
3. <https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D0%B5%D0%BD%D1%82%D0%B0%D0%B2%D1%80>
4. **Միմոնյան Հակոբ**, Բրոնզի դարի արքայական դամբարաններ Արագածոտնում // Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Հայագիտական միջազգային երկրորդ

համաժողովի զեկուցումների ժողովածու: - Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014.

5. **Simonyan H., Manasaryan N.** Royal tombs with horse sacrifices in Nerkin Naver, Armenia (Middle Bronze Age) // Ancient Near Eastern Studies, Supplement 44, Archaeozoology of the Near East X Proceedings of the Tenth International Symposium on the Archaeozoology of South-Western Asia and Adjacent Areas, Edited by Bea De Cupere, Veerle Linseele and Sheila Hamilton-Dyer, Leuven – Paris – Walpole, MA, 2013.
6. **Арцруни А.** Армения, Гиксосы и истоки цивилизации. Армянский язык и трудности мировой истории и словаря. – Москва, Издательство “Менеджер”, 2012.

Տժննդ/Հանձնվել է՝ 06.09.2022

Рецензирована/Գրախոսվել է՝ 13.09.2022

Принята/Ընդունվել է՝ 27.09.2022